- – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնասելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- – փոխադրվելու մեկ այլ բուհ , ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

15. Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2014 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Գրադարանային-տեղեկատվական աղբյուրների ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է հեռակա ուսուցում՝ «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» ծրագրով.

1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

| Կրթամաս | Կրեդիտներ | Դասընթաց-մոդուլների քանակը |
|-------------------------------|------------|----------------------------|
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Լրացական դասընթացներ | 0 | 2 |
| Ընդհանուր կրթամաս | 6 | 2 |
| Մասնագիտական պարտադիր կրթամաս | 57 | 16 |
| Կամընտրական դասընթացներ | 9 | 6 |
| ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Գիտական սեմինար | 15 | 5 |
| Գիտահետազոտական աշխատանք | 15 | 5 |
| Գիտահետազոտական պրակտիկա | 3 | 1 |
| Գիտամանկավարժ. պրակտիկա | 3 | 1 |
| Մագիստրոսական թեզ | 12 | 1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 120 | 39 |

Մագիստրոսի ծրագրի ուսումնական և հետազոտական կառուցամասերի հարաբերակցությունը.

| Կիսամյակ | I | II | III | IV | V | Ընդամենը |
|--------------------------------|----|----|-----|----|----|----------|
| Ուսումնական կառուցամաս, կրեդիտ | 16 | 20 | 18 | 18 | 0 | 72 |
| Հետազոտական կառուցամաս, կրեդիտ | 6 | 6 | 6 | 6 | 24 | 48 |
| Ընդամենը, կրեդիտ | 22 | 26 | 24 | 24 | 24 | 120 |

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 3-ը հատկացվում է տեսական ուսուցմանը, 9-ը՝ ինքնուրույն աշխատանքին և խորհրդատվություններին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Առանձին դեպքերում, մասնագիտական առանձնահատկություններից ելնելով, տեսական ուսուցման կազմակերպումը կարող է իրականացվել նաև 12-շաբաթյա ժամանակահատվածում:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատաձավալը համապատասխանում է 120 կրեդիտի, մեկ կիսամյակում այն կազմում է 24 կրեդիտ, իսկ մեկ ուսումնական տարում՝ 48 կրեդիտ:

2. Ծրագրի բովանդակությունը

2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է **լրացական,, ընդհանուր, մասնագիտական պարտադիր, և կամընտրական** դասընթացներից: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

2.1.1. Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է օտար լեզուն: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) ⁶ | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|--------|-------------------------------------|--------|-------------------------------------|----------|---------------|
| 18/H01 | Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-1 | 0 | 12/0/0/ | I | Ստուգարք |
| 18/H01 | Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-2 | 0 | 12/0/0/ | II | Ստուգարք |

⁶ Այսուհետ՝ դ – դասախոսություն, գ – գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք

2.1.2. Ընդհանուր դասընթացներ

Ընդհանուր կրթամասի աշխատաձևավարը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումն ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում» և «Մասնագիտության փիլիսոփայական հարցեր» Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր դասընթացներին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|--------|--|--------|------------------------|----------|---------------|
| 05/H02 | <i>Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում</i> | 3 | 12/0/0 | I | Քննություն |
| 16/H01 | <i>Մասնագիտության փիլիսոփայական հարցեր</i> | 3 | 12/0/0 | I | Քննություն |

2.1.3. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշխատաձևավարը ծրագրում սահմանված է 57 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝

«Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ»

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|--------|--|--------|------------------------|----------|---------------|
| 02/H01 | <i>Տեղեկատվական տեխնոլոգիաներ և թվային գրադարաններ</i> | 5 | 12/0/0 | I | Քննություն |
| 02/H02 | <i>Ընդհանուր գրադարանագիտություն</i> | 5 | 12/0/0 | I | Քննություն |

| | | | | | |
|---------|---|---|---------|-----|------------|
| 02/ H03 | Արխիվագիտություն | 5 | 12/0/0 | II | Քննություն |
| 02/ H04 | Մեքենարնթեռնելի քարտագրում, հեղինակա վոր գրառումներ | 6 | 12/0/0 | II | Քննություն |
| 02/ H05 | Գրադարանային տեղեկատվական ցանցերի նախագծում | 3 | 12/0/0 | III | Քննություն |
| 02/ H06 | Ծրագրավորման լեզուների ներածություն | 3 | 12/0/0 | III | Քննություն |
| 02/ H07 | Ծրագրավորման լեզուներ(JAVA) | 3 | 12/0/0 | IV | Քննություն |
| 02/ H08 | Վեր ծրագրավորում | 3 | 12/0/0 | III | Քննություն |
| 02/ H09 | Հեռուստուցման հիմունքներ | 3 | 12/12/0 | III | Քննություն |
| 02/ H10 | Փաստագիտություն | 3 | 12/0/0 | IV | Քննություն |
| 02/ H11 | Գրադարանային կայքի ձևավորում | 3 | 10/2/0 | IV | Քննություն |
| 02/ H12 | Գրադարանային տեղեկատվական ցանցերի կառավարում | 3 | 12/0/0 | IV | Քննություն |
| 02/ H13 | Մշակութային հիշողության պահպանում և թվայնացում | 3 | 12/0/0 | IV | Քննություն |
| 02/ H20 | Գրադարանային մարքեթինգ 1 | 3 | 12/0/0 | II | Քննություն |
| 02/ H21 | Գրադարանային մարքեթինգ 2 | 3 | 12/0/0 | III | Քննություն |
| 06/ H18 | Մտավոր սեփականության իրավունքի ներածություն. հեղինակային իրավունք | 3 | 12/0/0 | II | Քննություն |

2.1.4. Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևվալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական

դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևվալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝

§ Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ՝

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---------|--|--------|------------------------|----------|---------------|
| 02/ H14 | Տվյալների շտեմարաններ | 3 | 12/0/0 | II | Քննություն |
| 02/ H15 | Ինտեգրացված գրադարանային համակարգեր | | | II | Քննություն |
| 02/ H16 | Տվյալների շտեմարանների ձևավորում | 3 | 12/0/0 | III | Քննություն |
| 02/ H17 | HTML լեզվի ներածություն | | | III | Քննություն |
| 02/ H18 | Լինուքս օպերացիոն համակարգի կիրառումը գրադարանային գործում | 3 | 12/0/0 | IV | Քննություն |
| 02/ H19 | Քարտազրում և դասակարգում | | | IV | Քննություն |

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա և մագիստրոսական թեզ:**

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի անցկացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ: Կազմակերպվում է ուսումնառության բոլոր 5 կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում հատկացվում է 3 կրեդիտ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն ևս կազմակերպվում է ուսումնառության բոլոր կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում կազմում է 3 կրեդիտ աշխատածավալ:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 5-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատածավալ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ղասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնում հեռակա ուսուցմամբ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ ղասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին ղասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ ղասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, ղասընթացին հատկացված կրեդիտները, ղասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/H02. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդել գիտելիքներ ժամանակակից ինֆորմատիկայի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման մասին, որի հետևանքով ուսանողը կկարողանա ավելի խորը հետազոտությունները կատարել իր ոլորտում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

1.1. Անհատական համակարգչի արտաքին և ներքին կառուցվածքները նաև ներքին սարքավորումների նպատակը:

1.2. Ուտիլիտային ծրագրեր (paint, snapping tool, cleanup defragment և այլն)

1.3. ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները:

1.4. Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր:

2. կկարողանա

Windows XP, 7 օպերացիոն համակարգերի հիմնական տարրերի հետ աշխատանք: Բնութենետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ:

3. Օգտագործել MS Office հիմնական ծրագրերից՝

3.1 MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում, դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

3.2 MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝ բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում:

3.3 MS Office Word տեքստային խմբագրիչում՝ տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում, և ձևավորում:

Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ (մասնավորապես՝ ներմուծել MS Office Excel աղյուսակը MS Office Word) MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստեր և ռեֆերատների պատրաստում:

Հողվածներում, ռեֆերատներում հղումների ստանդարտների հետ աշխատել՝ մասնավորապես, IEEE 2006, ГОСТ(сортировка по именам) ГОСТ(сортировка по названиям) և այլն այլ ստանդարտներով աշխատել ինչպես նաև «Բովանդակություն»

կազմել օգտագործելով MS Office Word հրամաններից:

3. կտիրապետի TCP/IP արձանագրության համառոտ նկարագրությունը, արձանագրության նպատակը լոկալ և գլոբալ ցանցերում, հաշվողական ցանցերի դասակարգում, լոկալ ցանցերի տոպոլոգիա:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համակարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, էլքի-մուտքի սարքեր: Ինֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները: Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր (Windows XP, Windows 7), հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: **Թեմա 2՝** Համակարգային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: S2S գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր: **Թեմա 3՝** MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 4՝** MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 5՝** Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 6՝** MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում: MS Office PowerPoint ծրագրի դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող

յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

16/H01. Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)

Շարաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա.

կծանոթանա դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,

2. կկարողանա

ձեռք կրերի մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,

3. կտիրապետի

կծանոթանա միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ

Բովանդակությունը.

Թեմա 1: Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: **Թեմա 2՝** Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 3՝** Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: **Թեմա 4՝** Ռ. Դեկարտը որպես եվրոպական ռացիոնալիզմի հիմնադիր: **Թեմա 5՝** Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: **Թեմա 6՝** Նեոկանտականություն: **Թեմա 7՝** Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): **Թեմա 8՝** Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեմ, Պուանկարե), **Թեմա 9՝** Ամերիկյան պրագմատիզմ: **Թեմա 10՝** Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ: **Թեմա 11՝** XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: **Թեմա 12՝** Պոստպոզիտիվիզմ: **Թեմա 13՝** Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: **Թեմա 14՝** Հերմենևտիկան որպես մարդկային կեցության մասին

փիլիսոփայական ուսմունք: **Թեմա 15`** Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: **Թեմա 16`** Լեզվի փիլիսոփայությունը: **Թեմա 17`** Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: **Թեմա 18`** Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուհնը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/H01. Մասնագիտական օտար լեզու /անգլերեն/ 1 (0 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ներկայացնել անգլերենի կիրառական օգտագործումը: Դասընթացի շրջանակներում ուսանողները սովորում են անգլերենի քաղաքական բառապաշարը անգլերեն բնագիր թերթերի ու տեքստերի հիման վրա, որը վերջիններիս մոտ զարգացնում է դասական բնագրերի ընթերցանության և վերլուծության ունակությունները: Դասընթացն անց է կացվում “British Studies” գրքի միջոցով՝ զուգահեռ անգլերեն թերթերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կհիմանա անգլերեն քաղաքական բառապաշարը պրակտիկայում կիրառելու հմտությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1` Քերականություն

- Prepositions Murphy R., Units 96-98(theory in class, practice at home)
- English File “Extraordinary school for boys”, File 7^a, p. 64, Listening 3, ex. a, b, c, e. Speaking 4, ex. a.
H/w- Raeding and Speaking, p 66-67, ex a, b,

Թեմա 2` Vocabulary work English File, “The School System in the UK and the US”, p 161.

www.BreakingNewsEnglish.com

Pre -Listening/Reading activities on the text “*Plagiarism*”.

Speaking: Warm –up activities from handouts (whole class discussions on the topic).

Vocab. work – New words, synonym match, phrase match,

While reading/listening activity (gap filling, vocab.) Language work - (gap filling)

Թեմա 3` Revision of the Course. Speaking – Situations for improvisation- Dobson pp. 42-45

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

18/H01. Մասնագիտական օտար լեզու /անգլերեն/- 2 (0 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել իրական գործնական արդյունք, օտար լեզվով հաղորդակցական(բանավոր և գրավոր) կայուն հիմքերի ստեղծման համար, առավելագույնս խթանելով ուսանողների ակտիվությունը, նրանց ինքնուրույնությունն ու ստեղծագործական ներուժը: Վերջինիս պետք է նպաստի ինչպես լեզվական նյութի ընտրությանը, դրա իրադրային, հաղորդակցական և մասնագիտական ուղղվածությանը, այնպես էլ այդ նյութի մեթոդական կազմակերպմանը, այդ թվում՝ հաղորդակցական բնույթի խոսքային իրադրություններն ու առաջադրանքները:

Կրթական արդյունքները.

- 1.1 անգլերեն լեզվի հիմնական ժամանակաձևերը, քերականական կառուցվածքները, ընդհանուր և մասնագիտական բավարար առապաշար
- 1.2 Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում
- 1.3 Ընթերցել, ունկնդրել, խոսել և գրել անգլերեն լեզվով, օգտագործելով ճիշտ քերականական ժամանակաձևերը և կառուցվածքները՝ ըստ ծրագրով նախատեսված մակարդակի
- 1.4 կատարել և յուրացնել լեզվական աշխատանքներ, վարժություններ, տեքստային աշխատանք, բառարանային աշխատանք, թեմատիկ/մասնագիտական և իրադրային առաջադրանքներ (գրավոր և բանավոր խոսքին ուղղված զանազան առաջադրանքներ)
- 1.5 օգտվել անգլերեն լեզվով մասնագիտական գրականությունից
- 1.6 պատրաստել բանավոր պրեզենտացիաներ ընտրված թեմայի շուրջ
- 1.7 կիրառել տեսա-լսողական միջոցներ
- 1.8 մասնակցել բանավոր քննարկումների և երկխոսությունների,
- 1.9 հիմնական քերականական ժամանակաձևերին ու կառուցվածքներին, մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին, գրավոր տեքստերի թարգմանչական հմտություններին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական խոսք առարկայի մասին՝

Խնդիրներն ու նպատակները: Ընդհանուր գիտելիքների ստուգում: Introducing yourself.

Քերականություն

- Present Simple Tense, Present Continuous Tense Murphy R., Units 5, 6, 7, 3, 4, 8 (theory in class, practice at home)
 - Reading: “Teachers. Secondary School Teachers”
<http://en.wikipedia.org/wiki/Teacher>
H/w- Read, translate orally, retell the texts.
- Թեմա 2**՝ Word check (Teachers. Secondary School Teachers)

Քերականություն

- Regular/Irregular verbs. Murphy R., Units 24 (theory in class, practice at home), Appendix 2 p. 240-241
 - Reading: “Teaching around the world”
<http://en.wikipedia.org/wiki/Teacher>
H/w- Read, translate orally, retell the texts
Teaching in Armenia- writing composition
- Թեմա 3**՝ Word check (Teaching around the world)

Քերականություն

- Past Simple Tense, Past Continuous Tense, Murphy R., Units 11-14 (theory in class, practice at home)
 - Speak-Out: Podcast elementary “The future”, Video & Listening + handouts with exercises
 - Home Reading: “Pedagogy: Definition” (translate in written form), “The History of Pedagogy in education” (retell)
- Թեմա 4**՝ www.BreakingNewsEnglish.com

Pre -Listening/Reading activities on the text “*University fees*”.

Speaking: Warm –up activities from handouts (whole class discussions on the topic).

Vocab. work – New words, synonym match, phrase match,

While reading/listening activity (gap filling, vocab.)

Language work - (gap filling)

Քերականություն

- H/w- Present Simple Tense, Present Perfect Tense, Murphy R., Units 15-20 (practice and exercises at home)
- Թեմա 5**՝ Տնային վարժ. ստուգում
- Reading: “Learning Styles. Learning in Different Age Groups” (read in class & practice at home)

Քերականություն

- Personal, Possessive and Object Pronouns Murphy R., Units 58-61 (theory in class, practice at home)
- Թեմա 6**՝ Reading: “Modern Teaching Methods ” (read in class & practice at home)

Քերականություն

Question Words Murphy R., Unit 46

Listening 5 – New English File, p. 55, ex. a, b, c

Speaking 6 – ex. a

Vocabulary work – New English File, p. 150

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

02/H01. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և թվային գրադարաններ (5 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել մագիստրանտների մոտ տեղեկատվական հասարակության կառուցման պատկերը, որը թվային գրադարանի նախագծման ընթացքում համալիր մոտեցում կապահովի: Ինչպես նաև անդրադառնալ «բանիմացություն-փոխկապակցվածություն-բովանդակություն» շղթայում դրանց փոխհարաբերությանը: Դիտարկվում և քննարկվում են տեղեկատվական հասարակության բաղկացուցիչները, վերլուծվում է դրանցից յուրաքանչյուրի կառուցվածքը: Դասընթացի կառուցվածքը իրենից ներկայացնում է կոմպլեքսայնություն, միջդիսցիպլինարություն և բազմակողմանի վերլուծություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա թվային գրադարանի կառուցման հիմնախնդիրները որպես գիտական դիսցիպլին, արդի վիճակի և զարգացման պատմությունը, ծագող հիմնահարցերը և առանձնահատկությունները, դրանց հետ կապված հիմնական հասկացությունները:

2. կկարողանա նախագծման ընթացքում առանձնացնել թվային գրադարանի մոդուլները և գտնել համապատասխան ուղիներ ծագած ծրագրատեխնիկական, լեզվաբանական ապահովման, ստանդարտացման խնդիրների լուծման համար:

3. կտիրապետի թվային գրադարանների նախագծման վերաբերյալ միջառարկայական և ինտեգրացված բնույթի գիտելիքներին և ձեռք կբերեն հմտություններ և կարողություններ՝ խնդիրների լուծման գործընթացներում որոշումներ կայացնելու և դրանց լուծմանը ակտիվ մասնակցություն ունենալու ժամանակ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տեղեկատվական հասարակության մոդելի ներկայացում: Թվային գրադարաններ, էլ կրթություն, էլ. գիտություն, էլ առևտուր հիմնասյուների ներկայացում: Բանիմացություն, բովանդակություն, փոխկապակցվածություն բաղադրիչների ներկայացում: Դրանց դերը և նշանակությունը տեղեկատվական հասարա-

կույությունում: Համակարգչային գրագիտությունը, հրատարակումը Վեբ միջավայրում, ինֆորմացիոն համակարգերի հետ աշխատելու հմտությունները որպես Բանիմացության բաղկացուցիչներ: Մատենագիտական տեղեկատու և լրիվ տեքստային շտեմարանների դերն ու նշանակությունը Բովանդակություն ստեղծելիս: Բաց կողերով ծրագրաշարերը, Բաց մատչելիության հրատարակչական մոդելները, ՎԵԲ 2.0 միջավայրը որպես բովանդակային շտեմարանների ձևավորման գործիքաշարեր: **Թեմա 2** Դեպի տեղեկատվական հասարակություն: Տեղեկատվական գերմայրուղի, Կիրքոսովոդներ, Կիրքոստարածք, ինֆոխանութներ, ինֆոգործարաններ, Apps.gov հասկացությունների ներմուծում և ծանոթացում դրանց հետ: Կառավարության դերը, տեղեկատվության դերը և գինը տնտեսության մեջ, հեղինակային իրավունքի պաշտպանությունը, նոր աշխատատեղերի բացումը, ապագա տեղեկատվական մասնագետների կրթությունը հարցերի լուսաբանումը: **Թեմա 3** Թվային գրադարանների ստեղծման տեխնիկական նախադրյալները: Ծանոթացում Վաննեվար Բուշի «Ինչպես որ կարծում էինք» հոդվածին: Ալվին Թոֆլերի տեսության ներկայացում: Տեխնիկական այն նորամուծությունների ներկայացում որոնց շնորհիվ հնարավոր դարձավ սկսել տեղեկատվության պահոցների թվայնացումը: **Թեմա 4** Թվային գրադարանի բաղկացուցիչ մասերը: Ծանոթացում թվային գրադարանի բաղկացուցիչ մասերին՝ հաշվողական հզորություններ, կապի և հաղորդակցության միջոցներ, ծրագրային ապահովում, էլեկտրոնային պաշարներ (տվյալների շտեմարաններ), օժանդակ ծառայություններ, անձնակազմ: **Թեմա 5** Ծանոթացում կոմերցիոն ԵՎ բաց կողերով ծրագրային փաթեթներին: Բաց կողերով ծրագրերի (ԲԿԾ) արտոնագրման մեխանիզմների ներկայացում: ԲԿԾ համակարգերի առջև դրվող պահանջների ներկայացում և վերլուծում Այդ համակարգերի օգտագործման առավելությունները գրադարանային գործում: Կոմերցիոն և ԲԿԾ համակարգերի համեմատական վերլուծություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատույնը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H02. Ընդհանուր գրադարանագիտություն (5 կրեդիտ)

Շարքթական 6 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գրադարանագիտության վերաբերյալ մագիստրանտների մոտ ոլորտի ընդհանուր հիմունքների, գիտատեղեկատվական գործունեության գիտելիքների ձևավորում :

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.Իմանա գրադարանային գործի զարգացման հեռանկարները: Ձեռք կբերեն գիտելիքներ գրադարանների զարգացման հիմնախնդիրների, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև կծանոթանան գրադարանների հիմնական գործառույթների, գրադարանների կազմակերպման և հանրային օգտագործման տեսական և գործնական հիմնախնդիրների, զարգացման և գործառման օրինաչափությունների հետ:

2.կկարողանա կառավարել գրադարանային գործի կազմակերպման, կառավարման, հիմնական գործառույթները:

3.կտիրապետի գրադարանային գործի հիմնական գործառույթների՝ գրադարանային հավաքածուների համալրման և պահպանության, թվային շտեմարանների ձևավորման, գրադարանային քարտարանների կազմակերպման, գրադարանային սպասարկման, գրադարանի կառավարման սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝Ներածություն: Գրադարանագիտության ընդհանուր հիմունքներ:Գրադարանագիտությունը որպես գիտության համալիր ճյուղ, որն ուսումնասիրում է գրադարանային գործը, գրադարանների կազմակերպման և հանրային օգտագործման տեսական և գործնական հիմնախնդիրները, զարգացման և գործառման օրինաչափությունները, գործի պատմության հիմնախնդիրները:Գրադարանագիտության հասկացության սահմանումը: Գրադարանագիտության զարգացման հիմնական փուլերը:Գրադարանագիտության տեղը գիտությունների ընդհանուր համակարգում:**Թեմա 2**՝Գրադարանների առաջացումը, պատմությունը հին և միջին դարերում, արդի ժամանակաշրջանում: Ընդհանուր պատմական ակնարկ գրադարանների առաջացման, հին և միջին դարերի նրանց պատմության մասին: Գրադարանային գործի պատմությունը Հայաստանում:**Թեմա 3**՝ Գրադարանների տիպաբանություն, գրադարանային համակարգեր:Գրադարանների տիպաբանության էությունն ու չափանիշները:Գրադարանների հիմնական տիպերը և նրանց գործառույթները: Թվային գրադարան: Գրադարանային համակարգեր: Տարատեսակները:**Թեմա 4**՝Գրադարանների գործառնական կառուցվածքային հիմնական սկզբունքները: Գրադարանի դեկավարում: Գրադարանային համագործակցություն:Գրադարանի կառուցվածք: Կառուցվածքային

հիմնական ստորաբաժանումները և նրանց գործառույթները: Ֆինանսավորում: Օրենսդրություն: Հիմնական միջազգային ակտեր: Գրադարանային միություններ, կոնսորցիումներ: Գրադարանային միջազգային կազմակերպություններ: **Թեմա 5՝** Գրադարանային հավաքածուներ: Գրադարանային հավաքածուների ձևավորման սկզբունքները, չափորոշիչները և աղբյուրները: Հավաքածուների պահպանություն: Գրադարանային հավաքածուների կազմակերպում: **Թեմա 6՝** Գրադարանի տեղեկատու-մատենագիտական համակարգ: Գրացուցակավորում: Դասակարգման հիմնական համակարգերը: Տեղեկատու-մատենագիտական հավաքածու: Տեղակատու-որոնողական համակարգ: Գրադարանային գրացուցակներ՝ այբբենական և կարգային գրացուցակներ, կարգային գրացուցակի այբբենական-առարկայական ցանկ, Էլեկտրոնային գրացուցակ, համահավաք գրացուցակ: Մատենագիտական նկարագրման հիմնական սկզբունքները: Փաստաթղթերի կարգայնացման հիմնական սկզբունքները: Դասակարգման հիմնական համակարգերը /Դյուի , ՀՏԴ , ԳՄԴ, ԿԳԴ/: Առարկայացում: Առարկայական խորագրեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H03. Արխիվագիտություն (5 կրեդիտ)

Շարաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել արխիվային փաստաթղթերից օգտվելու մասին, ինչպես նաև արխիվային փաստաթղթերից ստացված տեղեկությունները գիտական աշխատանքում օգտագործելու հմտությունների զարգացում: Ծրագիրն ուսումնասիրելիս մագիստրանտը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև արխիվային գործի ոլորտում գործունեության ընթացքում անհրաժեշտ արխիվագիտական տեխնիկաների և տեխնոլոգիաների գործնական

կիրառման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.կիմանա արխիվային փաստաթղթերից օգտվելու և դրանք գիտական աշխատանքում օգտագործելու հմտությունները:Կհասկանա արխիվային փաստաթղթերում պարունակող տեղեկությունների կարևորը երկրորդականից տարբերելը: Կկարողանա գիտական աշխատանքում օգտվել ինչպես արխիվային, այնպես էլ մամուլում և գիտական գրականությունում եղած տեղեկությունները և դրանց համեմատումը:

2.կկարողանա աշխատել արխիվային գործի ոլորտում, օգտագործելով արխիվային փաստաթղթեր, կատարել գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք:

3.կտիրապետի փաստաթղթերի փորձաքննության և արխիվացման հմտություններին, արխիվային փաստաթղթերի պահպանության և օգտագործման կանոններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Արխիվագիտության առարկան և հիմնական հասկացությունները: Արխիվային գործը Հայաստանում և արտասահմանում: Արխիվային համակարգը Հայաստանում և արտասահմանում:Արխիվագիտությունը որպես պատմության օժանդակ առարկա:Արխիվը որպես պետականության խորհրդանիշ:Արխիվագիտություն առարկան ընդգրկող հիմնահարցերը: Փաստաթուղթ:Արխիվային գործ:Արխիվային փաստաթուղթ: Հնագույն արխիվները: Ռուսական արխիվները 19-20-րդ դարերում: Արխիվային գործի սկզբնավորումը և զարգացումը Հայաստանում: Արդի արխիվները: Հայաստանի ազգային արխիվը և կառուցվածքը: Արխիվի կանոնակարգը:**Թեմա 2՝**Արխիվային գործի մասին ՀՀ օրենսդրությունը: Արխիվային գործի մասին ՀՀ օրենսդրությունը և կատարելագործումը 1990-ական թվականներին: Արխիվային գործի մասին ՀՀ օրենքը և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերը: **Թեմա 3՝**Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուն, փաստաթղթերի կազմը և բովանդակությունը: Հայագիտական նյութերը արտասահմանյան արխիվներում: Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի նախախորհրդային, խորհրդային և արդի փաստաթղթերը: Ամենահին փաստաթղթերը: Ֆոնդերի քանակը և կազմը: Գիտական արժեք ներկայացնող փաստաթղթերի կազմը: Հայագիտական նյութերը Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Բուլղարիայի, Հունաստանի, Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների արխիվներում: Հայաստան տեղափոխված դրանց պատճենները: **Թեմա 4՝**Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրումը, պահպանումը և հաշվառումը:Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման սկզբունքները և ժամկետները, փաստաթղթերի փորձագիտական արժեքավորումը, պահպանության պայմանները և հաշվառման

նպատակները և ձևերը: **Թեևս 5**՝ Փաստաթղթերի նկարագրումը և արխիվային ֆոնդը, ցուցակ, գործ, թերթ: Փաստաթղթերի նկարագրության հասկացությունը և հիմնական տարրերը: Ֆոնդերի նկարագրությունը: Գործի նկարագրությունը: Արխիվային ցուցակ: Փաստաթղթերի նկարագրությունը: Անձնական ծագման փաստաթղթերի նկարագրության առանձնահատկություններ: **Թեևս 6**՝ Արխիվային տեղեկատու-որոնողական միջոցները, արխիվային ցուցակներ, քարտարաններ, ուղեցույցներ, արխիվային փաստաթղթերի տեսություններ, արխիվային ցուցիչներ, պատմական տեղեկանքներ: Տեղեկատու-որոնողական միջոցների ստեղծման նպատակը որպես փաստաթղթերի որոնման միջոց: Այդ միջոցների ստեղծման սկզբունքները: Արխիվային ցուցակի կազմման և ձևավորման կանոնները: Արխիվային քարտարանների համակարգը: Արխիվային ուղեցույցները, ֆոնդային, թեմատիկ: Արխիվային փաստաթղթերի տեսություններ, արխիվային ֆոնդերի տեսություններ, թեմատիկ տեսություններ: Արխիվային ցուցանիշների տեսակները: Պատմական տեղեկանք հասկացությունը և բովանդակությունը: **Թեևս 7**՝ Արխիվային գործի տեղեկատվայնացում: Ինքնաշխատ (ավտոմատ) տեղեկատու-որոնողական միջոցները: Տեղեկատվայնացման հասարակությունը, նպատակը, սկզբունքները, համակարգը և տվյալների շտեմարանի բովանդակությունը: Ինքնաշխատ տեղեկատու-որոնողական միջոցները աշխատանքի սկզբունքները և օգտագործման ձևերը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը արխիվային գործում: **Թեևս 8**՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի մատչելիությունը և օգտագործումը: Հայաստանի Հանրապետության արխիվային մատչելիությունը որպես ՀՀ Սահմանադրությամբ մարդու, տեղեկատվություն ազատ փնտրելու, ստանալու, հաղորդելու և տարածելու իրավունք: Մատչելիության սահմանափակումները, պետական և ծառայողական, մարդում ընտանեկան և անձնական կյանքի գաղտնիք պարունակելու դեպքում: Փաստաթղթերի օգտագործման ձևերը, քաղաքական, կազմակերպա-վարչական, գիտական, տնտեսական, մշակութային, ուսումնական, սոցիալ-իրավական: Փաստաթղթերի օգտագործման աշխատանքները հիմնական պահանջները: **Թեևս 9**՝ Օգտագործողին (ուսումնասիրողի) տեղեկատվական ապահովումը: Օգտագործողին տեղեկատվական ապահովման ձևերը, արխիվային տեղեկանք, արխիվային քաղվածք, արխիվային պատճեն: **Թեևս 10**՝ Արխիվի ընթերցասրահի աշխատանքը: Արխիվային փաստաթղթերի օգտագործումը գիտահետազոտական նպատակով: Ընթերցասրահում աշխատելու թույլտվության ձևակերպումը: Ընթերցասրահի աշխատանքի կանոնակարգը: Գիտահետազոտական նպատակով փաստաթղթերի օգտագործման ձևերը, գիտական, գիտահանրամատչելի և ուսումնական: Փաստաթղթերի հրապարակման ձևերը, փաստաթղթերի հավաքածու, փաստաթղթերի ժողովածու, ալբոմ, բուկլետ և այլն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H04. Մեքենարնթեռնելի քարտագրում, հեղինակավոր գրառումներ (6 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել մագիստրանտների մոտ տեղեկատվական հասարակության և թվային գրադարանների կառուցման ընթացքում միջազգայնորեն ընդունված ստանդարտների օգտագործման կարևորությունը: Հատկապես ուշադրություն է դարձվում նյութի նկարագրության մատենագիտական ստանդարտին (MARC21), տվյալների միջմեքենայական փոխանակման ստանդարտին (Z39.50), հեղինակավոր գրառումների ստեղծման ստանդարտին: Ներկայացվում է բազմալեզու հեղինակավոր գրառումների և մատենագիտական գրառումների ստեղծման անհրաժեշտությունը: Դասընթացի կառուցվածքը իրենից ներկայացնում է կոմպլեքսայնություն, միջդիսցիպլինարություն և բազմակողմանի վերլուծություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա թվային գրադարանի կառուցման հիմնախնդիրները որպես գիտական դիսցիպլին, ստանդարտների օգտագործման անհրաժեշտությունը, բազմալեզու գրառումներ ստեղծելիս ծագող հիմնահարցերը և առանձնահատկությունները, դրանց հետ կապված լուծումները:

2. կկարողանա նախագծման ընթացքում առանձնացնել թվային գրադարանի մոդուլները և գտնել համապատասխան ուղիներ ծագած ծրագրատեխնիկական, լեզվաբանական ապահովման, ստանդարտացման խնդիրների լուծման համար, ի վիճակի կլինեն ձևավորելու բազմալեզու գրառումներ հիմնված ISO2709 ստանդարտի վրա, որոնց հնարավոր կլինի փոխանակել գրադարանային գործընթացների ավտոմատացման ցանկացած համակարգերի օգտագործմամբ:

3. կստիքապետի թվային գրադարանների նախագծման վերաբերյալ միջառարկայական և ինտեգրացված բնույթի գիտելիքներին և ձեռք կբերեն հմտություններ և կարողություններ խնդիրների լուծման գործընթացներում որոշումներ կայացնելու և դրանց լուծմանը

ակտիվ մասնակցություն ունենալու ժամանակ:

Բովանդակությունը.

Ներածություն՝ Ավանդական գրադարան և թվային գրադարան: Ավանդականի պարագայում հնարավոր չէ իրականացնել մատենագիտական գրառումների փոխանակում, որը մեծապես դժվարացնում, իսկ երբեմն էլ անհնարին է դարձնում համահավաք գրացուցակների ձևավորում: Սրան հակառակ մեքենարնթեռնելի քարտագրումը հիմնովին փոխում է իրավիճակը քարտարանների ստեղծման ընթացքում: Ներ են մուծվում մեքենարնթեռնելի ստանդարտների հետ կապված հիմնական հասկացությունները, բացատրվում են դրանց օգտագործումը տարբեր երկրներում: **Թեմա 1**՝ Մեքենարնթեռնելի ստանդարտներ: Մեքենարնթեռնելի ISO2709 ստանդարտի կառուցվածքի ներկայացում՝ գրառման կառուցվածք, բովանդակության նկարագրում, և բուն բովանդակություն: Գրառման կառուցվածքը բացատրվում է հիմնված հետևյալ միջազգային համաձայնագրերի վրա՝ Z39.2 և ISO2709, բովանդակության նկարագրումը՝ «կոդ և պայմանավորվածություն է գրառման ներսում տվյալների հստակ և միարժեք բնութագրման համար»: Բուն բովանդակությունը նկարագրվում է համաձայն նյութի նկարագրության միջազգային ստանդարտների՝ անգլո-ամերիկյան քարտագրման օրենքների (AACR2), Կոնգրեսի գրադարանի առարկայական խորագրերի (LCSH), Բժշկության ազգային գրադարանի խորագրերի (MeSH): **Թեմա 2**՝ ՄԵԸՔ ստանդարտի վրա հիմնված ձևաչափեր: Հեղինակավոր գրառումներ՝ ՄԵԸՔ ստանդարտով ստեղծված գրառումները տեղեկություններ են պարունակում անձանունների, խորագրերի, աշխարհագրական անվանումների մասին: Մատենագիտական գրառումներ՝ ՄԵԸՔ մատենագիտական գրառումները նկարագրում են նյութը (գիրք, ձայներիգ, քարտեզ, պարբերական հրատարակություն, էլեկտրոնային ֆայլ և այլն) ըստ նկարագրման խմբերի: Դասակարգիչներ: Դասակարգիչների վերաբերյալ տվյալները պահվում են ՄԵԸՔ գրառումների տեսքով (օրինակ Կոնգրեսի գրադարանի դասիչները պահվում են MARC 21 ձևաչափով): Մանրամասն նկարագրվում է պահումների վերաբերյալ գրառումները՝ որոնք տրամադրում են տվյալ գրադարանում պահվող նյութի տեղաբաշխման, միավորների քանակի, կարգավիճակի, գույքահամարի և այլնի վերաբերյալ տվյալներ :

Թեմա 3՝ MARC21-ի ստանդարտի ազգային տարբերակները: Ծանոթացում ԱՄՆ-ում, Եվրոպայում, Ռուսաստանում, Հայաստանում, Կանադայում, Սկանդինավյան երկրներում օգտագործվող մատենագիտական ստանդարտներին: Ներ են մուծվում և բացատրվում են հիմնական ՄԵԸՔ հասկացությունները՝ շտեմարան, տվյալ, դաշտ և գրառում: Բացատրվում են ցուցիչ և ինդիկատոր, բաժանարար և ենթադաշտի կոդ հասկացությունները: Կոնկրետ օրինակներով նկարագրվում են ցուցիչի և ինդիկատորի կիրառությունները: **Թեմա 4**՝ Նյութի նկարագրության տեսակների ներկայացում: Մատենագիտական տվյալների MARC 21

ստանդարտը նախատեսված է տեղեկատվության տարբեր տեսակի կրիչների վրա թողարկված նյութերի նկարագրության համար: Դասի ընթացքում ներկայացվում են նկարագրության այդ խմբերը, տրվում են դրանց բացատրությունները: **Թեմա 5**՝Նկարագրության Խմբերի ներկայացում:Նկարագրության տաս խմբերի ներկայացում՝ 00X (Վերահսկիչ և ճանաչման խմբեր), 1XX (Հիմնական մուտքի խումբ), 2XX (Վերնագիր և պատասխանատուներ), 3XX (Ֆիզիկական նկարագրիչներ), 4XX (Մատենաշար), 5XX (Ծանոթությունների և նշումների խումբ), 6XX (Առարկայական խորագրերի խումբ), 7XX (Ավելացված մուտքեր (մատչելիության լրացուցիչ կետեր)), 8XX (Մատենաշարի ավելացված կետեր), 9XX (Տեղային օգտագործման խումբ): **Թեմա 6**՝Ծանոթացում ՄԵԸՔ գրառման տրամաբանության հետ: Բերվում է առաջատարի, գրառման բառարանի և տվյալների դաշտերի բացատրությունը, դրանց տրամաբանական կառուցվածքը: Բացատրվում են սևեռված և փոփոխական երկարությամբ դաշտերի նշանակությունը: Կոնկրետ օրինակների վերլուծության հիման վրա ներկայացվում է առաջատարի կառուցվածքը, դրա յուրաքանչյուրի դիրքի նիշերի իմաստը: Բացատրվում է 8 և 16 բիթանի կոդավորման համակարգերը: **Թեմա 7** Դաշտերի կոդերի բացատրություն: Ներկայացվում է 0XX (Վերահսկիչ և ճանաչման խմբեր), 1XXX (Հիմնական մուտքի խումբ), 2XX (Վերնագիր և պատասխանատուներ), 3XX (Ֆիզիկական նկարագրիչներ), 4XX (Մատենաշար) խմբերի մանրակրկիտ բացատրությունը: Օրինակների տեսքով և գործնական աշխատանքի օգնությամբ ներկայացված է խմբերի ներսում ընդգրկված դաշտերի ազդեցությունը մատենագիտական գրառման բաժանարարների վրա: **Թեմա 8**՝ Դաշտերի կոդերի բացատրություն (շարունակություն):Ներկայացվում է 5XX (Ծանոթությունների և նշումների խումբ), 6XX (Առարկայական խորագրերի խումբ), 7XX (Ավելացված մուտքեր (մատչելիության լրացուցիչ կետեր), 8XX (Մատենաշարի ավելացված կետեր), 9XX (Տեղային օգտագործման) խմբերի մանրակրկիտ բացատրությունը: Օրինակների տեսքով և գործնական աշխատանքի օգնությամբ ներկայացված է խմբերի ներսում ընդգրկված դաշտերի ազդեցությունը մատենագիտական գրառման բաժանարարների վրա: **Թեմա 9**՝Հեղինակավոր գրառումներ:Ներմուծվում է հեղինակավոր գրառում հասկացությունը, բացատրվում է դրա կապը մատենագիտական գրառման հետ: Բացատրվում է բազմալեզու հեղինակավոր գրառումներ ստեղծելու կարևորությունը և ձևավորման նրբությունները: **Թեմա 10**՝ Նյութի միջազգային ստանդարտ համարի համակարգ:Բացատրվում է գրքի նկարագրության միջազգային ստանդարտը, պարբերականի նկարագրության միջազգային ստանդարտը, երաժշտական ստեղծագործության միջազգային համարը, տեխնիկական հաշվետվությունների միջազգային ստանդարտ համարը, թվային օբյեկտների նկարագրիչը: Ներկայացվում է այս համարների տրամաբանական

կառուցվածքը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H05. Գրադարանային տեղեկատվական ցանցերի նախագծում (3 կրեդիտ)

Շարժական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնառության ընթացքում ուսանողներին համակարգային գիտելիքներ հաղորդել՝ Ցանցային տեխնոլոգիաներ՝ առարկայի, նրա հիմնական խնդիրների և այդ խնդիրների լուծման մեթոդների մասին:

Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը կարող է ձեռք բերել անհրաժեշտ տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով աշխատելու, ինչպես նաև հմտություններ և կարողություններ ցանցային տեխնոլոգիաների ուսումնասիրման և խնդիրները ինքնուրույն լուծելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.Կիմանա

OSI և TCP/IP ցանցային մոդելների կառուցվածքների տարբերությունը

2.Կկարողանա

հասկանալ ցանցային մակարդակների բաժանման մեխանիզմները

3.Կտիրապետի

ցանցային տեխնոլոգիաների կիրառությունները գիտության և տեխնիկայի ոլորտներում:

Բովանդակությունը.

Ներածություն Ժամանակակից ցանցային տեխնոլոգիաների օգնությամբ լուծվում են բազմաթիվ խնդիրներ, ինչպիսին է օրինակ՝ թվայնացված տվյալների փոխանցման համակարգերի նախագծումն ու կառուցումը: Այսօր ցանցային տեխնոլոգիաների կիրառումը լայն տարածում է գտել, ոչ միայն ինտերնետի տարածման պատճառով, այլ նաև տվյալների փոխանցման հնարավորությամբ օժտված բազմաթիվ շարժական սարքերի զարգացման շնորհիվ: Տվյալ առարկայի նպատակն է ուսումնասիրել ցանցային տեխնոլոգիաների ընդհանուր առանձնահատկությունները և - 56 - կիրառությունները

գիտության և տեխնիկայի զանազան ոլորտներում: **Թեմա 1**՝ Համակարգչային ցանցերի կառուցվածքը և դասակարգումը: Հիմնական գաղափարներ և սահմանումներ: Համակարգչային ցանցերի սահմանումը, ընդհանրացված կառուցվածքը: Ցանցերի դասակարգումը ըստ միացման եղանակի: Հաղորդակցական գծերի բնութագրեր՝ ոլորված լարագույգ (twisted pair, UTP), համառանցք մալուխ (coaxial), օպտիկամանրաթելային (fiber optic), անլար (wireless): **Թեմա 2**՝ Լոկալ և գլոբալ ցանցեր: Լոկալ և գլոբալ ցանցեր (LAN, WAN): Լոկալ ցանցի հիմնական տեսակները Ցանցային տոպոլոգիա՝ շինային (bus), աստղաձև (star), օղակաձև (ring): Ցանցային ուղղորդող սարքավորումներ՝ կրկնիչ/հաբ (repeater/hub), կամուրջ/կոմուտատոր (bridge/switch), երթուղավորիչ (router): **Թեմա 3**՝ Ցանցային ճարտարապետություն: OSI ցանցային մոդել: OSI ցանցային մոդել (7 մակարդակ)՝ Ֆիզիկական (Physical), Տվյալներ կապող (Data Link), Ցանցային (Network), Տրանսպորտային (Transport), Սեսիոնային (Session), Ներկայացման (Presentation), Կիրառական (Application): **Թեմա 4**՝ TCP/IP ցանցային մոդել: TCP/IP ցանցային մոդել (4 մակարդակ)՝ Կապող (Link), Ինտերնետային (Internet), Տրանսպորտային (Transport), Կիրառական (Application): OSI և TCP/IP ցանցային մոդելների համեմատություն

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H06 . Ծրագրավորման լեզուների ներածություն (3 կրեդիտ)

Շարձական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ապահովել անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներ JAVA լեզվի կառուցվածքի, օպերատորների, փոփոխականների, պարզ և բարդ տիպերի կիրառման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **Կիմանա**
2. Իդենտիֆիկատորների, լեքսեմաների, պահեստավորված բառերի, մեկնաբանությունների նկարագրությունները JAVA լեզվում

3. Պարզ և բարդ տիպերի նկարագրությունները JAVA լեզվում
4. Օպերատորները և նրանց առաջնահերթության նկարագրությունը JAVA լեզվում

2. կլարողանա

1. Ստացած գիտելիքներն օգտագործել կազմելու պարզ կիրառական խնդիրների լուծման ծրագրեր JAVA լեզվով
2. Օգտագործել JAVA լեզվի օպերատորները
3. Աշխատել պարզ և բարդ տիպերի հետ

3. կտիրապետի

1. JAVA լեզվի շարահյուսությանը և իմաստաբանությանը
2. Փոփոխականների տիպերի նկարագրությանը
3. JAVA լեզվով ծրագրի կառուցվածքի նկարագրությանը

Բովանդակությունը.

Թեմա 1 Ծրագրավորման որոշ լեզուների համեմատական վերլուծություն: Իդենտիֆիկատորների, լեքսեմաների, պահեստավորված բառերի, մեկնաբանությունների նկարագրությունները JAVA լեզվում: **Թեմա 2** Պարզ և բարդ տիպերի նկարագրությունները JAVA լեզվում: Փոփոխականների հայտարարումը JAVA լեզվում: **Թեմա 3** Օպերատորները և նրանց առաջնահերթության նկարագրությունը JAVA լեզվում: Պայմանական, անցման և ցիկլի օպերատորների նկարագրությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H07. Ծրագրավորման լեզուներ (JAVA) (3 կրեդիտ)

Շարաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ապահովել անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներ JAVA լեզվի նախագծերի, դասերի, մեթոդների ստեղծման, Eclipse-Java միջավայրի գործիքային համակարգի օգտագործման վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

- JAVA լեզվի դասերի նկարագրությունը և կիրառությունը
 - Eclipse-Java միջավայրի գործիքային համակարգը
 - Խնդիրների լուծման ընթացակարգը JAVA-ի տարբեր տիպերի

և զանգվածների օգտագործմամբ

2. կկարողանա

-Մտացած գիտելիքներն օգտագործել կազմելու որոշ կիրառական խնդիրների լուծման ծրագրեր JAVA լեզվով

-Օգտագործել Eclipse-Java միջավայրի գործիքային համակարգը

-Աշխատել JAVA-ի տարբեր տիպերի և զանգվածների հետ

3. կտիրապետի

-JAVA լեզվի մեթոդների նկարագրությանը և կիրառությանը

-Eclipse-Java միջավայրի գործիքային համակարգին

-JAVA լեզվով կիրառական խնդիրների լուծման ընթացակարգին

Քովանդակությունը.

Թեմա 1՝ JAVA լեզվի դասերի, մեթոդների նկարագրությունը և կիրառությունը: **Թեմա 2**՝ Օանթոթացում Eclipse-Java միջավայրի գործիքային համակարգի հետ: Նախագծերի և դասերի ստեղծում Eclipse-Java միջավայրում: **Թեմա 3**՝ Խնդիրների լուծում JAVA-ի տարբեր տիպերի օգտագործմամբ և զանգվածների վերաբերյալ **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H08. Վեբ ծրագրավորում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել ծրագրավորել PHP լեզվով, ստեղծել դինամիկ վեբ էջեր, MYSQL տվյալների շտեմարանի հետ կապ հաստատել, դինամիկ վեբ էջի միջոցով տվյալները մուտքագրել MYSQL տվյալների շտեմարան և այնտեղից հետագայում կարողանալ այդ տվյալները արտահանել և արտացոլել վեբ կայքում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա PHP ծրագրավորման լեզուն

2. կկարողանա առանձնացնել Web կայքերի նախագծման և մշակման համար հիմնախնդիրները և գտնել համապատասխան ուղիներ դրանց լուծման համար:

3. կտիրապետի PHP լեզվով ծրագրավորման հիմունքներին, ստեղծել դինամիկ Web էջեր, կկարողանան MYSQL տվյալների

շտեմարանի հետևյալ հաստատել, դիմումի վեբ էջերի միջոցով, տվյալները մուտքագրել MySQL տվյալների շտեմարան:

Բովանդակությունը.

Ներածություն Ինչ է PHP: PHP-ն հապավում է, կամ ինչպես ընդունված է ծրագրավորման բնագավառում ընդլայնում է, ամբողջական արտահայտությունն է Hypertext Preprocessor: PHP-ով կրելի է գրել նաև առանձին ծրագրեր օգտվելով իր PHP-GTK լրացուցիչ ծրագրային հավելումից, սակայն նրա կոչումն է ծառայել վեբ կայքերին: PHP -ն ծրագրավորման servser-side, այսինքն սերվերային, լեզու է: Այդ առումով այն տարբերվում է Javascript -ից , որը client-side ծրագրավորման լեզու է: Այն հիմնականում կիրառվում է html ֆայլերում, տեղադրվում է սերվերում և սկսում է գործել ինտերնետային բրաուզերի կողմից արված հարցումից հետո: Համակարգչի մեջ տեղադրել PHP և MySQL ծրագրերը: Ստեղծել PHP լեզվով պարզագույն web սկրիպտ: **Թեմա 1** PHP լեզվում փոփոխականների և հաստատունների սահմանումը: Տվյալների տիպերը և նրանց կիրառումը: ՀԱՍՏԱՏՈՒՆՆԵՐ՝

Հաճախ անհրաժեշտություն է առաջանում սահմանել հաստատուններ, այդ նպատակով թիք –ում կիրառվում է define() ֆունկցիան: Տվյալների տիպերը՝ PHP-ն դիմումի տիպավորմամբ լեզու է, ուստի փոփոխականների հայտարարման ժամանակ դրանց տեսակը նշել հարկավոր չէ: Տարբեր սկալյար տիպերի միջև փոխակերպումն իրականացվում է անուղղակիորեն և առանց ավելորդ ջանքերի (սակայն PHP-ն նաև լայն հնարավորություններ է տալիս դրանց ուղղակիորեն փոխակերպման համար): Սկալյար տիպերն են՝ ամբողջ թվերը (integer), բնական (տասնորդական կոտորակով) թվերը (float, double), տրամաբանակ տիպը (boolean), տողային տիպերը (string), և NULL հատուկ տիպը: Ոչ սկալյար տիպերն են «ռեսուրսները» (resource), զանգվածները (array), օբյեկտները (object): **Թեմա 2** PHP լեզվում օպերատորները տողերի հետ, մաթեմատիկական, վերագրման, համեմատման և այլ գործողությունները: ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ Կիրառվող թվաբանական օպերատորներն են -, +, *, / և %: -\$a այս արտահայտությունը նշանակում է բացասական թիվ, այսինքն -a, \$a+\$b այս արտահայտությունը նշանակում է a+b \$a-\$b այս արտահայտությունը նշանակում է a-b \$a*\$b այս արտահայտությունը նշանակում է a*b \$a/\$b այս արտահայտությունը նշանակում է a:b \$a%\$b այս արտահայտությունը կոչում են մոդուլ:

Թեմա 3 if...else....elseif օպերատորները, նրանց սահմանումը և կիրառումը: Շատ հաճախ, ծրագրավորողը ուզում է կատարել տարբեր գործողություններ ըստ տարբեր որոշումների: Ծրագրավորողը կարող է օգտագործել պայմանական օպերատորները և կատարել ծրագրի ուզած հատվածը կախված պայմաններից: HP-ում մենք ունենք հետևյալ պայմանական օպերատորները: if հայտարարություն - իրականացնում է որոշ կողը միայն եթե նշված պայմանը ճիշտ է ifelse հայտարարությունը իրականացնում որոշ կողը, եթե պայմանը ճիշտ է, եւ ուրիշ կողը,

եթե պայմանը կեղծ է if ... elseif ուրիշ հայտարարությունը ընտրում է մի քանի բլոկներից և կատարում նրանք, որոնք համապատասխանում են պայմանին: **Թեմա 4**՝ Ցիկլեր, նրանց սահմանումը և կիրառումը: For, Do-while, Foreach ցիկլերը: **Թեմա 5**՝ Մասիվներ, նրանց սահմանումը, ինդեքսավորումը և ցիկլերի օգտագործումը նրա էլեմենտները ստանալու համար: Ձանգվածը իրենից ներկայացնում է նույն տիպի էլեմենտների (փոփոխականների) խումբ, որոնք հաջորդաբար դասավորված են հիշողության մեջ և որոնք կարող են դիմվել զանգվածի անվանը կցելով համապատասխան էլեմենտի ինդեքսը: Մա նշանակում է, որ մենք կարող ենք պահել 5 հատ int տիպի փոփոխականներ, առանց հայտարարելու 5 հատ՝ իրարից տարբեր անուններով փոփոխականներ: Գոյություն ունի 2 տիպի զանգվածներ, որոնք տարբերվում են էլեմենտների իդենտիֆիկացիայով: 1. Առաջին տիպի զանգվածներում, էլեմենտը որոշվում է ինդեքսի հաջորդականությամբ: Այդպիսի զանգվածները կոչվում են սովորական զանգվածներ: 2. Երկրորդ տիպի զանգվածները ունեն ասոցիատիվ բնույթ, և էլեմենտներին դիմելու համար անհրաժեշտ է բանալի, որը կհանդիսանա լոգիկական իմաստ արժեքի հետ: Այդպիսի զանգվածներ կոչվում են Ասոցիատիվ զանգվածներ: **Թեմա 6**՝ Ֆունկցիաների սահմանումը և օգտագործումը PHP լեզվում: Ֆունկցիաների արգումենտներ, կանչը և վերադարձվող արժեքը: Ըստ լռության ֆունկցիաների արգումենտներ: Փոփոխականների տեսանելիության դաշտ: Վիճակագրական փոփոխականներ: Վերականգնում/զրոյացում: Ռեկուրսիվ ֆունկցիա **Թեմա 7**՝ PHP լեզվի ֆունկցիաները MYSQL բազայի հետ կապ հաստատելու (mysql_pconnect) և աղյուսակ ընտրելու համար (mysql_select_db) : Մինչև մենք կկարողանանք դիմել MySQL տվյալների բազային, պետք է կապ հաստատենք MySQL սերվերի հետ: Դա կարող ենք կատարել mysql_connect () ֆունկցիայի միջոցով: Աշխատանքից հետո անհրաժեշտ է փակել կապ: Կապը կփակվի, եթե սցենարի ավարտից առաջ օգտագործենք mysql_close () ֆունկցիան: MySQL սերվերից անհրաժեշտ տվյալների բազան կարող ենք ընտրել PHP mysql_select_db () ֆունկցիայի միջոցով: **Թեմա 8**՝ PHP լեզվի mysql_query ֆունկցիան: MYSQL բազայից ինֆորմացիա ստանալը (select): PHP-ում մենք պետք է օգտագործել mysql_query () ֆունկցիան: Այս ֆունկցիան օգտագործվում է MySQL տվյալների շտեմարան հարցում ուղարկելու համար: `mysql_query("SELECT")` SELECT հրամանը, օգտագործվում է տվյալների բազայից տվյալների ընտրություն կատարելու համար: Շարահյուսությունը՝ SELECT column_name (ներ) FROM table_name SELECT հրամանը, օգտագործվում է տվյալների բազայից տվյալների ընտրություն կատարելու համար: **Թեմա 9**՝ HP լեզվի mysql_query ֆունկցիան MYSQL բազայում ինֆորմացիա մուտքագրելու համար (insert): The INSERT INTO հրամանը օգտագործվում տվյալների բազայի աղյուսակի մեջ նոր գրառումներ ավելացնելու համար: PHP լեզվի mysql_query ֆունկցիան MYSQL

բազայում ինֆորմացիա մուտքագրելու համար (insert): The INSERT INTO հրամանը օգտագործվում տվյալների բազայի աղյուսակի մեջ նոր գրառումներ ավելացնելու համար: Շարահյուսություն՝ INSERT INTO հրամանը կարելի է գրել երկու ձևով: Առաջին ձևում չի նշվում սյունակների անունները, որտեղ տվյալները պետք է տեղադրվեն միայն նշվում է նրանց արժեքները: Երկրորդ ձևում սյունակների անունները և արժեքները պետք է տեղադրված լինեն: **Քեմա 10** PHP լեզվի mysql_query ֆունկցիան MySQL բազայից ինֆորմացիա հեռացնելու համար (delete): DELETE հրամանը օգտագործվում է MySQL տվյալների բազայի աղյուսակից գրառումները հեռացնելու համար: Շարահյուսությունը՝ DELETE FROM table_name WHERE some_column = some_value շում: WHERE դրույթը սահմանում է, թե որտեղ, որ գրառումը պետք է ջնջվի. եթե չնշեք WHERE դրույթը բոլոր գրառումները կջնջվեն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H09. Հեռաուսուցման հիմունքներ ծրագրավորում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեղեկատվական հասարակության և թվային գրադարանների կառուցման ընթացքում հեռաուսուցման կրթական հարթակի դերին և նշանակությանը, օգտագործման հնարավորություններին; Ներկայացվում է դասընթաց պատրաստելու ողջ գործիքաշարը՝ տեսական մաս, հանձնարարություններ, մասնակիցների գրանցում, քննաշարերի պատրաստում, գնահատման մեթոդիկա, տեսա կոնֆերանսի կազմակերպում գրուցասրահի հնարավորությունների օգտագործում, համակցում սոցիալական ցանցերին; Դասընթացի կառուցվածքը իրենից ներկայացնում է կոմպլեքսայնություն, միջդիսցիպլինարություն և բազմակողմանի վերլուծություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը

1. **կիմանա** հեռաուսուցման դասընթացի կառուցման հիմնախնդիրները որպես գիտական դիսցիպլին, ստանդարտների

օգտագործման անհրաժեշտությունը, դասընթացներ ստեղծելիս ծագող մանկավարժական և տեխնիկական հիմնահարցերը և առանձնահատկությունները, դրանց հետ կապված լուծումները:

2. կկարողանա նախագծել դասընթաց, գրանցել և հեռացնել մասնակիցների, փոխել գաղտնաբառերը, կազմել քննաշարեր, դիտել և վերլուծել ուսանողների հաճախումների վիճակագրությունը, գտնել համապատասխան ուղիներ ծագած ծրագրատեխնիկական, լեզվաբանական ապահովման, ստանդարտացման խնդիրների լուծման համար, ի վիճակի կլինեն ձևավորելու քննաշարեր, կազմակերպել առցանց քննարկումներ, կազմակերպել տեսա կոնֆերանսներ:

3. կտիրապետի հեռաուսուցման համակարգի նախագծման վերաբերյալ միջառարկայական և ինտեգրացված բնույթի գիտելիքներին և ձեռք կբերեն հմտություններ և կարողություններ՝ խնդիրների լուծման գործընթացներում որոշումներ կայացնելու և դրանց լուծմանը ակտիվ մասնակցություն ունենալու ժամանակ:

Բովանդակությունը.

Ներածություն՝ Ավանդական կրթություն և հեռավար ուսուցում: Ավանդականի պարագայում հնարավոր չէ իրականացնել տարածապես բաշխված սովորողների ուսումնառությունը, որը մեծապես դժվարացնում, իսկ երբեմն էլ անհնարին է դարձնում շարունակական կրթության կազմակերպումը: Մրան հակառակ հեռաուսուցման հարթակները հիմնովին փոխում են իրավիճակը: Ներկայացվում է հեռաուսուցման զարգացման պատմությունը և արդի վիճակը, ներկայացվում է հեռաուսուցման վիճակը տարբեր երկրներում: **Թեմա 1** Կրթական տարածքի ձևավորում: Moodle համակարգի մոդուլների կարգաբերում, կառավարման գործիքների տեղաբաշխում, գործիքների ակտիվացման և կասեցման տեխնիկաների հետ ծանոթացում: Օգտվողների գրանցում և հաշվառում: Նկարների տեղադրում, գաղտնաբառերի կարգաբերում: **Թեմա 2**

Դասընթացի մոդուլների ակտիվացում

- Տեսական մոդուլի կառուցում:
- Հիպերտեքստային հղումների տեղադրում:
- Բառարանների ստեղծում::

Ուսանողները ինքնուրույն ձևավորում են տեսական մոդուլի համար նախատեսված կրթական տարածքը, տեղադրում են մեկ մոդուլ, սովորում են ներդնել հիպերհղումներ, նկարներ, մուլտիմեդիա: **Թեմա 3**՝ Հանձնարարությունների մոդուլի ձևավորում: Ծանոթացում սինխրոն և ասինխրոն քննարկումների հետ: Ծանոթացում վիրտուալ խմբերի ստեղծման հնարավորություններին: Ծանոթացում հանձնարարություններ կառուցելու տեխնիկային: **Թեմա 4**՝ Թեստային Քննաշարերի մոդուլի ձևավորում: Մեկ ճիշտ պատասխանով առաջադրանքների կազմում, բազմակի պատասխանների ընտրությամբ առաջադրանքների կազմում, համապատասխանություն որոշող առաջադրանքների կազմում, ճիշտ հաջորդականությունը որոշելուն ուղղված առաջադրանքների կազմում, ազատ պատասխան

առաջադրանքներ, բաց պատասխաններով առաջադրանքներ, ընտրված պատասխան պահանջող առաջադրանքներ: **Թեմա 5**՝ Տեսակոնֆերանսների կառուցում: Առկա ծրագրային փաթեթների ներկայացում և վերլուծություն; Տեսադասախոսության պատրաստում: **Թեմա 6**՝ Գնահատման համակարգի կառուցում: Բալային համակարգի կառուցում: Փորձերի քանակի կարգաբերում: Ուսանողների մասնակցության վերահսկում դասախոսի կողմից մոդուլի աշխատանքի ներկայացում: **Թեմա 7**՝ Մասնակիցների գրանցում և կառավարում: Մասնակիցների գրանցում ներքին էլեկտրոնային փոստի համակարգում, կարգավիճակի փոփոխություն, հաղորդագրությունների փոխանակում, մասնակիցների նկարների տեղադրում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H10. Փաստագիտություն (3 կրեդիտ)

Շարաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնական գործունեության ընթացքում մագիստրանտին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել փաստերից օգտվելու մասին, ինչպես նաև գիտական աշխատանքում փաստերն օգտագործելու հմտությունների զարգացում: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ փաստերը ամբողջության մեջ միավորելու, որը հնարավորություն է տալիս ինչ-որ բան բացահայտել, ապացուցել, հիմնավորել, ճանաչել:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը

1.կիմանա փաստերից օգտվելու և դրանք գիտական աշխատանքում օգտագործելու հմտությունները, կհասկանան կարևոր փաստեր երկրորդականից տարբերելը, կկարողանա կատարել գիտական աշխատանք:

2.կկարողանա աշխատել արխիվային գործի ոլորտում,

օգտագործելով արխիվային փաստաթղթեր, կատարել գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք:

3. կտիրապետի փաստերի ընտրության և օգտագործման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Փաստերի օբյեկտիվությունը: Իրականությանը և իրողության օբյեկտիվ երևույթներին փաստերի համապատասխանության աստիճանը: **Թեմա 2**՝ Փաստերի տեղեկատվական ծավալը: Որոշ փաստեր ամբողջությամբ և պերճախոս վկայում են ինչ-որ երևույթի մասին, իսկ մյուսների տեղեկատու պաշարը քիչ է կամ աննշան տվյալ հետազոտության համար: **Թեմա 3**՝ Փաստի գիտական արժեքը: Երբ փաստերը պետք է համապատասխանեն հետազոտության գիտական մեթոդաբանության չափանիշերին, երևույթների հայեցակարգային մեկնաբանման կանոններին: **Թեմա 4**՝ Փաստի համապատասխանությունը հետազոտության թեմային: Հետազոտական գործընթացում հանդիպում են բազմաթիվ փաստեր, որոնք բավականին արժեքավոր են, սակայն ուղակի կապ չունեն հետազոտության թեմային: **Թեմա 5**՝ Փաստի աղբյուրի գնահատումը: Տրվում է փաստի ստացման աղբյուրի վստահելի լինելը: **Թեմա 6**՝ Փաստերի իրատեսական համադրման, համատեղման և միավորման սկզբունքները: Տրվում են փաստերի համադրման, համատեղման և միավորման սկզբունքները իրականության ճշգրիտ մեկնաբանման համար: **Թեմա 7**՝ Փաստի գիտական մեկնաբանման սկզբունքները: Փաստի պարզաբանումը իսկության և օբյեկտիվության դիրքերից: **Թեմա 8**՝ Փաստերի հետ աշխատանքի հիմնական սխալները: Փաստերի կանխամտածված ընտրությունը կամ հավաքումը, որը ձևավորում է հիմնախնդիրների և զարգացման միտումների միակողմանի ներկայացում: Փաստերի նենգափոխում գլխավորների և կարևորների փոխարինումը երկրորդականներով և մասնավորներով: Փաստի բովանդակության խեղաթյուրում, նրա սուտ լուսաբանում: Փաստերի կեղծում՝ նրանց որոշակի ընտրություն, որը խեղաթյուրում է իրերի իրական դրությունը: Առանձին փաստերի գերազնահատում, որը հանգեցնում է հիմնախնդրի կեղծ պատկերացման և դատողության սահմանափակման:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատույնը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H11. Գրադարանային կայքի ձևավորում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել տեղադրել web հոստինգի տիրույթում և օգտագործել DRUPAL համակարգը, ստեղծել դինամիկ գրադարանային web կայքեր DRUPAL համակարգի միջոցով, կարողանալ օգտվել:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիրառնա** Drupal CMS-ը:

2. **կկարողանա** Drupal CMS-ի միջոցով Web կայքեր նախագծել և մշակել: Գտնել համապատասխան ուղիներ հիմնախնդիրները լուծելու համար:

3. **կտիրապետի** Drupal համակարգով գրադարանային web կայքերի ձևավորման հիմունքներին: Դինամիկ Web պորտալների ստեղծմանը, հետագա զարգացմանը և ծրագրային և տեխնիկական աջակցմանը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Drupal ծրագրի տեղադրումը: Drupal ծրագիրը կարելի է ներբեռնել <http://drupal.org/project/drupal> հասցեից: Անհրաժեշտ է բացել նրա արխիվացված փաթեթը և պարունակությունը տեղփոխել Apache web սերվերի տիրույթը: Windows օպերացիոն համակարգում կարող ենք նախօրոք տեղադրել Xampp ծրագիրը, որը ավտոմատ կերպով տեղադրում է Apache web սերվեր, Mysql տվյալների շտեմարան և PHP սկրիպտային լեզվի պրոցեսոր: Drupal CMS-համակարգի մենյուների և ենթամենյուների ստեղծումը և նրանց հղումը էջերի վրա: Drupal-ի մենյուները ստեղծելու համար օգտվում ենք Administr->Site Building->Menus հղումից, որտեղ կա Add menu հրամանը: Նաև օգտվում ենք Administer->Site Building->Blocks բաժնից և ընտրելով Site menu բլոկի դիմաց <դիրք> sitebar և հաստատել սեղմելով save: Մենյուն կհայտնվի կայքի այն մասում, որտեղ ցանկանում ենք այն երևա: **Թեմա 2**՝ Drupal CMS համակարգում նոր մոդուլների ավելացումը և նրանց արտապատկերումը բլոկների տեսքով: Մոդուլների համար օգտագործողների իրավունքների սահմանումը: Մոդուլները դրանք PHP լեզվով գրված ծրագրեր են, որոնք DRUPAL համակարգին հնարավորություն են տալիս ընդլայնելու իր ֆունկցիոնալ հնարավորությունները: Դա կարող է լինել web կայքի մաս կազմող ցանկացած սերվիս, օրինակ՝ ինտերնետային խանութ, քվեարկության համակարգ, գրադարանային համակարգ, RSS ծալավեն: Մոդուլը տեղադրելուց հետո այն բլոկի տեսքով կարելի է ակտիվացնել կայքի ցանկացած հատվածում: Նաև օգտագործողների իրավունքներ բաժնում կարող ենք սահմանել

իրավունքներ, թե որ օգտագործողները որ մոդուլից կարող են օգտվել և ինչ հնարավորություններից:

1. Drupal CMS-համակարգի Forum մոդուլի նշանակությունը, կառուցվածքը և կիրառումը: Forum մոդուլը հնարավորություն է տալիս կայքում ստեղծել ֆորում և այն կառավարել ադմինիստրատիվ միջերեսի միջոցով:

2. pal CMS-համակարգի Poll մոդուլի նշանակությունը, կառուցվածքը և կիրառումը

Poll-ը ապահովում է բազմակի քվեարկության համակարգեր, որոշումների կայացման գործիքներ, եւ կառավարման տարբերակներ:

Ա) Քվեարկության համակարգեր: Կարողանում ենք հաստատել քվեարկությունը, տեսնել յուրաքանչյուր օգտվողի քվեն, ջնջել բոլոր ձայները, կամ սահմանափակել հարցումը:

Բ) Ժամանակի կառավարում: Բացել կամ փակել poll-ը և ընտրել, թե երբ ցույց տալ արդյունքները:

3. pal CMS-համակարգի Aggregator մոդուլի նշանակությունը կառուցվածքը և կիրառումը:

Aggregator մոդուլը հնարավորություն է տալիս ուրիշ web կայքերից հավաքված RSS (Rich Site Summary) հոսքերը ներկայացնել մեր web կայքէջում RSS ժապավենի տեսքով: **Թեևս 3** Drupal CMS-համակարգի Search մոդուլի նշանակությունը, կառուցվածքը և կիրառումը: Որոնման մոդուլը թույլ է տալիս օգտվողներին որոնել կոնկրետ բովանդակություն կայքում: Նա կարող է որոնել և օգտագործողների անուններ, եւ որոշակի բառեր ցանկացած տիպի քոնթենթում page, story, book, comment: Օգտվողը կկարողանա որոնել գրանցված ուրիշ օգտվողներին: Ձեր կայքում, ինչպես նաեւ նրանց փոստային հասցեները, եթե իհարկե, նա ունի բավարար իրավունքներ: Ձեր կայքում, ինչպես նաեւ նրանց փոստային հասցեները, եթե իհարկե նա ունի բավարար իրավունքներ:

1. Drupal CMS-համակարգի Path մոդուլի նշանակությունը կառուցվածքը և կիրառումը: Հիմնական Path մոդուլը թույլ է տալիս ընտրովի ստեղծել URL aliases ձեր Drupal էջերում: Որպես լրակցաց, Drupal ավտոմատ կերպով ստեղծում web հասցեները, ինչպես <http://www.example.com/?q=node/67>: Որոնման համակարգերը ավելի արդյունավետ են գործում, եթե կայքում կան էջեր, որոնք ունեն ավելի շատ մարդկային, բարեկամական լեզվով կազմված հղումներ, հատկապես, եթե նրանք ներառում են համապատասխան բառեր, օրինակ, <http://www.example.com/?q=all-about-tarantulas>.

2. Drupal CMS-համակարգի Blog մոդուլի նշանակությունը կառուցվածքը և կիրառումը: Բլոգային մոդուլը հնարավորություն է տալիս պահպանել սեփական օրագիրը: Օրագիրը մի շարք Ֆորումում հաղորդագրություններ է, որը սովորաբար դիտվում է ըստ ամսաթվի: Օրագիր գրանցումները կարող են կատարել և կայքում գրանցված և չգրանցված անձինք կախված սահմանված

իրավունքներից:

3. Drupal CMS-համակարգի Locale մոդուլի նշանակությունը կառուցվածքը և կիրառումը:

Locale մոդուլը լուծում է բազմալեզվության խնդիրը:

Դուք կարող եք կարգավորել կայքը հնարավորություն տալով օգտագործել բազմաթիվ լեզուներով: Կարող եք ընտրել ինտերֆեյսը ավելի քան 80 առկա լեզուներով: Եթե Ձեր կայքը պահանջում է միջերես օտար լեզուներով, կամ, եթե դուք պետք է կայքը թողարկեք որևէ ընտրված լեզվով, առաջին քայլը պետք է ակտիվացնել iocel մոդուլը Drupal համակարգում:

1. Դուք նաև կարող եք համակարգել Drupal կայքը այնպես, որ թույլատրի Ձեր օգտագործողներին փոփոխել լեզուները, նաև դուք կարող եք թարգմանել բովանդակությունը բազմաթիվ լեզուներով: **Թեմա 4**՝ Drupal CMS-համակարգի կառուցվածքը և կայքը կարգավորելու նպատակով օգտագործողի համար նախատեսված միջերեսը: Նախատեսված է DRUPAL-ը համակարգելու համար: Ադմինիստրատորը իր ծածկագրով մուտք գործելով համակարգ, կարողանում է կառավարել քոնթենթները, մենյուները, մոդուլները, թեմաները: Նշանակում է իրավունքներ օգտատերերի համար: Drupal CMS-համակարգի կառուցվածքը և կայքը կարգավորելու նպատակով օգտագործողի համար նախատեսված միջերեսը: Նախատեսված է DRUPAL-ը համակարգելու համար: Ադմինիստրատորը իր ծածկագրով մուտք գործելով համակարգ, կարողանում է կառավարել քոնթենթները, մենյուները, մոդուլները, թեմաները: Նշանակում է իրավունքներ օգտատերերի համար: rupal CMS համակարգում էջերի ստեղծումը և նրանց տիպերը: էջերի կապակցումը մենյուների հետ: Drupal-ի քոնթենթը և նրա կարգավորումը: Եթե սեղմենք Create content հղումը, կրացվի հրամանների ցուցակ, որոնցով կարող ենք ավելացնել նոր էջեր կայքում: Page-տիպը յուրահատուկ է նրանով, որ նրա համար արգելված է մեկնաբանություն ներդնել և էջում ցույց չի տրվում հեղինակի մասին ինֆորմացիան և ստեղծման ժամանակահատվածը, օրինակ մեր մասին էջը: Story-Այս տիպը նախատեսված է ձեր այցելուներին հայտնելու ինչ-որ հետաքրքիր նյութի մասին հոդվածներ, նորություններ; Այցելուները կարող են թողնել մեկնաբանություններ: Կարող են նաև արտապատկերվել ուրիշ էջերի ներսում՝ օրինակ գլխավոր էջում: Book-Այստեղ հնարավորություն կա իրար հետ կապակցել միատեսակ էջերը: Նշենք, որ կարող ենք ստեղծել նաև նոր տեսակներ օգտագործելով CCk մոդուլը: **Թեմա 5**՝ Drupal CMS համակարգում բլոկների կիրառումը և wysiwyg խմբագրի միջոցով էջերի խմբագրումը: Wysiwyg մոդուլը դա ծրագիր է, որը հնարավորություն է տալիս ընդլայնելու Drupal-ի ֆունկցիոնալ հնարավորությունները: wysiwyg մոդուլը դա խմբագրիչ է, որը հնարավորություն է տալիս էջի Body մասում տեղադրելու գործիքների պանել, որպեսզի կարողանանք հավաքել տեքստեր, տեղադրել նկարներ առանց HTML լեզվի տեղերը իմացության: Drupal CMS համակարգում մոդուլների

համար օգտագործողների իրավունքների սահմանումը: Այստեղ կոնկրետ նշված է թե կայքի, որ բաժնում կարելի է նշանակել իրավունքներ տարբեր մոդուլներում բլոկներում նաև իրավունքների տեսակներ տվյալ մոդուլի ադմինիստրատոր, ստեղծել քոնթենթ, խմբագրել, դիտել հեռացնել և այլն: Բայց միանշանակ պարզ է, որ բոլոր գրանցված օգտագործողները չեն կարող ունենալ նույն իրավունքները դրա համար նախ անհրաժեշտ է սահմանել որոշակի դեր և գրանցած օգտագործողին տալ իր դերը ինչպես թատրոնում յուրաքանչյուրին իր դերը: **Թեմա 6**՝ Drupal CMS համակարգում նոր themes-ներ (թեմաներ՝ կայքի գրաֆիկական դիզայնի պատրաստի տարբերակներ): Նրանց տեղադրումը Drupal CMS- ի մեջ և նրանց համակարգումը: Թեմաները դրանք կայքի շարժումներ են, որոնք կարելի է փոփոխել ցանկացած կերպով ստանալով մեր ուզած գրաֆիկական տեսքը: Գնալով <http://drupal/themes> թղթապանակ մենք կտեսնենք 4 հիմնական թեմաները, որոնք տեղադրման ժամանակ գտնվում են Drupal-ի փաթեթում: Իսկ եթե ներբեռնում ենք նոր թեմաներ դրանք պետք է տեղադրել [http://drupal/site/all/](http://drupal/site/all/themes) themes թղթապանակի մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/H12. Գրադարանային տեղեկատվական ցանցերի կառավարում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնառության ընթացքում մագիստրանտներին համակարգային գիտելիքներ հաղորդել "Ցանցային տեխնոլոգիաներ" առարկայի, նրա հիմնական խնդիրների և այդ խնդիրների լուծման մեթոդների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը կարող է ձեռք բերել անհրաժեշտ տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով աշխատելու, ինչպես նաև հմտություններ և կարողություններ ցանցային տեխնոլոգիաների ուսումնասիրման և խնդիրները ինքնուրույն լուծելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.կիմանա

OSI և TCP/IP ցանցային մոդելների կառուցվածքների տարբերությունը

2.կկարողանա

հասկանալ ցանցային մակարդակների բաժանման մեխանիզմները

3.կտիրապետի

ցանցային տեխնոլոգիաների կիրառությունները գիտության և տեխնիկայի ոլորտներում:

Բովանդակությունը.

Ներածություն Ժամանակակից ցանցային տեխնոլոգիաների օգնությամբ լուծվում են բազմաթիվ խնդիրներ, ինչպիսին է օրինակ թվայնացված տվյալների փոխանցման համակարգերի նախագծումն ու կառուցումը: Այսօր ցանցային տեխնոլոգիաների կիրառումը լայն տարածում է գտել, ոչ միայն ինտերնետի տարածման պատճառով, այլ նաև տվյալների փոխանցման հնարավորությամբ օժտված բազմաթիվ շարժական սարքերի զարգացման շնորհիվ: Տվյալ առարկայի նպատակն է ուսումնասիրել ցանցային տեխնոլոգիաների ընդհանուր առանձնահատկությունները և դրանց կիրառությունները գիտության և տեխնիկայի զանազան ոլորտներում: **Թեմա 1** Ethernet տեխնոլոգիա (CSMA/CD), ARP, ICMP Ethernet տեխնոլոգիա (CSMA/CD): ARP արձանագրություն: ICMP արձանագրություն: PING, TRACEROUTE (TTL, Hops): **Թեմա 2** IP հասցեավորումը: Ցանցային երթուղավորում: IP հասցեներ, ենթացանցի դիմակ (subnet mask): Հատուկ հասցեներ՝ ենթացանցի հասցե (subnet address), հեռարձակման հասցե (broadcast address), Special-Purpose IP Addresses (<http://tools.ietf.org/html/rfc6890>) 127.0.0.0/8, 10.0.0.0/8, 172.16.0.0/12, 192.168.0.0/16: **Թեմա 3** TCP և UDP արձանագրություններ: TCP արձանագրություն: UDP արձանագրություն: Ցանցային ծառայությունների պորտերի գաղափարը (application port numbers): Հայտնի ծառայությունների պորտերի օրինակներ: **Թեմա 4** DNS ծառայություն: DNS ծառայության կառուցվածք (Root Domain, TLD, SLD), աշխատանքի սկզբունքներ (Root Servers ...) և տվյալների տեսակները (Resource Records)

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

02/Մ13.Մշակութային հիշողության պահպանում և թվայնացում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մագիստրանտի մոտ տեղեկատվական հասարակության և թվային գրադարանների կառուցման ընթացքում բաց մատչելիության հրատարակչական մոդելների օգտագործման կարևորությունը հասկանալուն: Հատկապես ուշադրություն է դարձվում այս բնագավառում կուտակված միջազգային փորձին, բաց մատչելիության համակարգերի կայացման համար Բեռլինի և Բուդապեշտի հոչակագրերին, «Բաց արխիվների նախաձեռնությունը և հանրային մետատվյալների հավաքմանը»: Բացատրված են թե ինչպես են գիտաչափական և մատենաչափական համակարգերի կիրառմամբ հաշվարկվում գիտնականի, հետազոտական հաստատության, կրթական կառույցի, առանձին վերցրած երկրների գիտական քաջերը: Դասընթացի կառուցվածքը իրենից ներկայացնում է կոմպլեքսայնություն, միջդիսցիպլինարություն և բազմակողմանի վերլուծություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա բաց մատչելիության հրատարակչական մոդելների կառուցման հիմնախնդիրները որպես գիտական դիսցիպլին, ստանդարտների օգտագործման անհրաժեշտությունը, բաց մատչելիության համակարգեր ստեղծելիս ծագող հիմնահարցերը և առանձնահատկությունները, դրանց հետ կապված լուծումները:

2. կկարողանա նախագծման ընթացքում աշխատել հետազոտողի հետ, կազմակերպել լրիվ տեքստային հրատարակությունների ինդեքսավորումը համացանցի որոնողական շարժիչների կողմից, գտնել համապատասխան ուղիներ ծագած ծրագրատեխնիկական, լեզվաբանական ապահովման, ստանդարտացման խնդիրների լուծման համար, ի վիճակի կլինեն ինտեգրել բաց մատչելիության համակարգերը գրադարանային գործընթացների ավտոմատացման ցանկացած համակարգերի հետ:

3. կտիրապետի աշխատել գիտաչափական և մատենաչափական տվյալների շտեմարանների հետ, գիտական հաղորդակցության համակարգերի նախագծման վերաբերյալ միջառարկայական և ինտեգրացված բնույթի գիտելիքներին և ձեռք կբերեն հմտություններ և կարողություններ՝ խնդիրների լուծման գործընթացներում որոշումներ կայացնելու և դրանց լուծմանը ակտիվ մասնակցություն ունենալու ժամանակ:

Բովանդակությունը.

Ներածություն՝ Գլոբալացման արդի ժամանակաշրջանում գիտության և տեխնոլոգիաների համաշխարհային զարգացումները նոր մարտահրավերներ են առաջադրում նաև

